




Մարդու
Իրավունքների
Տուն
Երևան



**ՏԱՐԵԿԱՆ
ՁԵԿՈՒՅՑ
2019**

ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ



Մարդու իրավունքների տուն Երևան, 2020 թ.
Երևան, Հայաստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

■ Նախաբան	3
<hr/>	
■ Հանրային աջակցություն իրավապաշտպաններին	4
■ Բոլոր տեսակի ճնշման միջոցների վերացում	12
■ Կամայական ձերբակալման և կալանավորման վերացում	14
■ Խաղաղ բողոքի ցույցերի դյուրացում	16
■ Պայքար անպատժելիության դեմ, պատասխանատվության ենթարկում	18
■ Մասնավոր ընկերությունների պատասխանատվության ենթարկում	20
■ Կին իրավապաշտպանների պաշտպանություն	22
■ Իրավապաշտպան փաստաբանների պաշտպանություն	24
■ Փոքրամասնությունների պաշտպանների պաշտպանություն	26
■ Իրավապաշտպանների ընտանիքի անդամների պաշտպանություն	28
<hr/>	
■ Հղումներ	30



Մարդու իրավունքների տուն Երևանն իր խորին շնորհակալությունն է հայտնում զեկույցի կազմման համար հարցազրույցներին մասնակցած անձանց՝ Արսեն Մկրտչյանին (փաստաբան), Տաթևիկ Աղաբեկյանին (Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն), Գոհար Շահնազարյանին («Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ), Լարիսա Մինասյանին (Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան), Մամիկոն Հովսեփյանին («Փինք» իրավապաշտպան ՀԿ) և Զարուհի Մեջլումյանին (լրագրող, փաստաբան)՝ փորձագիտական գնահատականների ու տեղեկատվության տրամադրման համար:

ՆԱԽԱԲԱՆ

Ձեկույցում ներկայացված են 2019 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ իրավապաշտպանների¹ դեմ արձանագրված ոտնձգությունների դեպքերը: Ձեկույցը կազմվել է Մարդու իրավունքների տուն Երևանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների, առանձին իրավապաշտպանների հետ անցկացված հարցազրույցների ու ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակված տվյալների հիման վրա:

Ձեկույցը կազմվել է «Իրավապաշտպանների իրավունքները. իրավապաշտպան գործունեությունը պաշտպանելու ու հզորացնելու սկզբունքներն ու նորմերը» գրքույկում ամրագրված սկզբունքներին ու նորմերին համապատասխան²: Ձեկույցում անդրադարձ է կատարվել նշված 16 սկզբունքներից ու նորմերից 10-ին, որոնցով արձանագրվել են խախտումներ:

Ձեկույցում իրավապաշտպանների դեմ ոտնձգությունների դեպքերը ներառված են հետևյալ երկու հիմնական չափանիշների հաշվառմամբ ու համադրմամբ՝ (1) անձի կողմից իրականացված գործունեության հանրագուտ բնույթը՝ ուղղված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությանը, իրավունքի գերակայության ապահովմանն ու ժողովրդավարության հաստատմանը և (2) անձի կողմից իր գործունեության մեջ մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին հավատարիմ լինելը, մասնավորապես՝ բոլորի մարդու իրավունքների հարգումը, իրավահավասարության ճանաչումն ու խտրականության բացառումը:

Ձեկույցում ներկայացվում են նշված սկզբունքներից ու նորմերից յուրաքանչյուրի հակիրճ բովանդակությունը, իրավապաշտպանների դեմ ոտնձգությունների դեպքերը, ինչպես նաև պետությանն ու հանրային գործունեություն իրականացնող այլ սուբյեկտներին արվող առաջարկությունները: Առաջարկությունները ներկայացնելիս հաշվի է առնվել նաև վերը նշված գրքույկում ներկայացված միջազգային փորձը: Մարդու իրավունքների տուն Երևանը հետամուտ է լինելու, որպեսզի սույն զեկույցում արված առաջարկությունները հաշվի առնվեն մարդու իրավունքների ոլորտում քաղաքականությունների ու օրենքների մշակման ու դրանց հետագա կատարելագործման գործընթացներում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

Քաղաքական առաջնորդները, ինչպես նաև տնտեսվարողները, լրատվամիջոցներն ու կրոնական առաջնորդները պետք է «հրապարակայնորեն ընդունեն իրավապաշտպանների դերի կարևորությունն ու լեգիտիմությունը մարդու իրավունքների, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության խթանման հարցում»³:



Նկարագրություն. 2019 թվականին Մարդու իրավունքների տուն Երևանի (ՄԻՏ Երևան) կողմից ՀՀ-ում իրավապաշտպանների վիճակի մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրելու, որ պետությունը, ինչպես նաև հանրային գործունեություն վարող այլ գործիչները հիմնականում թերացել են իրավապաշտպաններին, հատկապես՝ կին իրավապաշտպաններին ու ԼԳԲՏԻ շահերի պաշտպաններին, հրապարակայնորեն աջակցելու ու պաշտպանելու հարցում: Ավելին, առանձին դեպքերում, ինչպես օրինակ՝ ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության դեպքում, խմբակցության պատգամավորները հենց իրենք են թիրախավորել նշված խմբերի իրավապաշտպաններին՝ նրանց հասցեին հնչեցնելով սպառնալիքներ ու բռնության կոչեր, խտրական վերաբերմունք ցուցաբերել և խարանել նրանց: Առանձին պետական պաշտոնյաների ու հանրային գործիչների, այդ թվում՝ ՀՀ վարչապետի կողմից իրավապաշտպաններին թիրախավորելու ու խտրականացնելու դեպքերը դատապարտող հայտարարություններ թեպետ եղել են, սակայն դրանք կրել են Էպիգոդիկ բնույթ, չեն արտահայտել պետության միասնական դիրքորոշումը հանրային կարևորություն ներկայացնող՝ խնդրո առարկա հարցերի վերաբերյալ: Նշվածը, ըստ Էության, խոչընդոտել է այդ խնդիրների նկատմամբ համակարգային մոտեցման որդեգրումը՝ հանրային քաղաքականությունների և օրենսդրական ակտերի մշակման ու ընդունման տեսքով: Այդուհանդերձ, մեծ է եղել թիրախ հանդիսացած իրավապաշտպանների աջակցությունն ու պաշտպանությունը տեղական ու միջազգային հասարակական կազմակերպությունների, իսկ առանձին դեպքերում՝ միջազգային հանրության կողմից, ի դեմս միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների, ՀՀ-ում այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների ու միջազգային պատվիրակությունների:

1.1.

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից 2019 թվականի մայիսի 4-ին Երևանի «Բուկինիստ» (Գրքերի աշխարհ) գրախանութում կազմակերպվել էր «Իմ մարմինն անձ-



Նական Է» գրքի շնորհանդեսը: Շնորհանդեսը հարկադրական կերպով դադարեցվեց 20-25 հոգուց բաղկացած խմբի միջամտության արդյունքում, որոնք տեղում սկսել էին աղմուկ բարձրացնել, գոռոռալ շնորհանդեսի մասնակիցների վրա: Այդ անձանց կարծիքով՝ գիրքը այլասերվածություն է քարոզում և ուղղված է հայկական ավանդական ընտանիքի դեմ⁴: Նշված միջադեպից բացի, չեղարկվեցին գրքի՝ նախապես պլանավորած մյուս շնորհանդես-միջոցառումները:

- Ի պաշտպանություն կենտրոնի և, մասնավորապես, «Իմ մարմինն անձնական Է» գրքի՝ ֆեյսբուքյան գրառմամբ հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Չարուհի Բաթոյանը՝ դատապարտելով շնորհանդեսի խափանման փորձը: Նախարարն իր ֆեյսբուքյան էջում տեղադրեց գիրքն ամբողջությամբ՝ ցույց տալու, որ գրքում այլասերվածության քարոզի մասին խոսք չկա՝ այն հասանելի դարձնելով հասարակության ավելի լայն շրջանակներին⁵: Ֆեյսբուքյան գրառումից հետո նախարարն ինքը դարձավ ատելության խոսքի թիրախ:
- Խնդրին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով, որ գրքի շուրջ ստեղծված աղմուկը նաև իրեն է ստիպել ծանոթանալ գրքին⁶: Վարչապետը, մասնավորապես, անդրադառնալով մանկապղծության վերաբերյալ վիճակագրական տվյալներին՝ կարևորեց երեխաների սեռական դաստիարակության հարցը, ինչին էլ, ըստ Վարչապետի, ծառայում է հիշատակված գիրքը: Վարչապետը նաև կարևորեց ոլորտի հասարակական կազմակերպությունների գործունեությունն՝ ընդգծելով դրանց ունեցած հնարավոր դերակատարությունը մանկապղծությունների թվի՝ տարեցտարի արձանագրվող նվազման գործում:
- Կենտրոնի պաշտպանությամբ հանդես եկան նաև մի շարք հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ ՄԻՏ Երևանը և «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Հայտարարությամբ, ի թիվս այլևի, ՀՀ

կառավարությանը կոչ էր արվում քայլեր ձեռնարկել կանխարգելելու և պատժելու իրավապաշտպան կազմակերպությունների և անհատների նկատմամբ հարձակումներն ու ատելության խոսքը, ապահովելու իրավապաշտպանների անխոչընդոտ գործունեությունը⁷:

1.2.

2019 թվականի ապրիլի 5-ին ՀՀ Ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ, տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանը խորհրդարանում ենթարկվեց խտրական վերաբերմունքի: Ելույթը ԼԳԲՏԻ մարդկանց հետագա թիրախավորման, նրանց խարանման մեծ ալիք առաջ բերեց, Լիլիթ Մարտիրոսյանի հանդեպ եղան բռնություն գործադրելու սպառնալիքներ⁸: Քաղաքական գործիչների ու հանրային գործունեություն իրականացնող այլ անձանց կողմից իրավապաշտպանի պաշտպանության հրապարակային հայտարարություններ ոչ միայն չեղան, այլ իրավապաշտպանը թիրախավորվեց հենց նրանց կողմից: Այսպես.

- ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանը («Բարգավաճ Հայաստան» խմբակցություն) Լիլիթ Մարտիրոսյանի՝ նշված ելույթի ավարտին խտրական բնույթի դիտարկում արեց՝ ասելով, թե վերջինս խախտել է նիստի օրակարգը (իր ելույթով՝ ՄԻՏ Երևան) և այսպիսով «ուղղակի անհարգալից վերաբերմունք է դրսևորել հանձնաժողովի նկատմամբ»⁹: Իր հետագա հարցազրույցներից մեկում անդրադառնալով Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին՝ Նաիրա Չոհրաբյանն այն որակեց որպես անպարկեշտ քայլ, ապտակ խորհրդարանին¹⁰:
- Անդրադառնալով Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին՝ նույն խմբակցության պատգամավորներից Վարդան Ղուկասյանը, մասնավորապես, առաջարկեց այրել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին՝ ավելացնելով, որ դատվելուց չի վախենում¹¹: Խմբակցության մեկ այլ պատգամավոր՝ Գևորգ Պետրոսյանը, խիստ բացասաբար վերաբերվելով տրանսգենդեր կնոջը ԱԺ ամբիոնից խոսելու հնարավորություն տալու փաստին, վերահաստատեց ԼԳԲՏ քարոզչությունը արգելող օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իր մտադրությունը¹²: Նույն խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանն էլ, անդրադառնալով ելույթին և դրա շուրջ ծավալված իրադարձություններին, նշեց, թե դա (սեռական այլ կողմնորոշումը՝ ՄԻՏ Երևան) արատ է, և որ իրենք թույլ չեն տալու, որ դա տարածվի¹³:
- Խնդրին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով, որ նախկին իշխանությունների կողմից Լիլիթ Մարտիրոսյանին ՀՀ քաղաքացու անձնագրի տրամադրումը նշանակում է, որ նրան շնորհվել են ՀՀ քաղաքացու բոլոր իրավունքները՝ առանց բացառության՝ փորձելով վերջ տալ, իր գնահատմամբ, տեղի ունեցող քաղաքական շահարկումներին: Ընդգծելով այն փաստը, որ Լիլիթ Մարտիրոսյանի ելույթը տեղի է ունեցել հենց մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժո-

ղովում, Վարչապետը խնդրահարույց համարեց հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանի վարքագիծը՝ նշելով, որ նման վարքագիծը կասկածի տակ է դնում Հայաստանում մարդու իրավունքների վիճակը¹⁴:

- Դեպքի առնչությամբ համատեղ հայտարարությամբ հանդես եկան Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը և Հայաստանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների դեսպանությունները: Համատեղ հայտարարությունում մասնավորապես ասված է, որ նշված կառույցները «խորապես մտահոգված են վերջին շրջանում տեղի ունեցող մի շարք դեպքերի առնչությամբ, երբ Հայաստանում փոքրամասնությունների և իրավապաշտպանների նկատմամբ լուրջ սպառնալիքներ, այդ թվում մահվան սպառնալիքներ են հնչել»¹⁵: Եզրափակելով՝ ԵՄ-ն Հայաստանում բոլորին հորդորում է դատապարտել ատելության խոսքը և կոչ անում իրավապահ մարմիններին՝ ձեռնարկել անհապաղ քայլեր Հայաստանի քաղաքացիների ֆիզիկական անվտանգության երաշխիքների ապահովման ուղղությամբ¹⁶:
- Հայտարարությամբ հանդես եկավ նաև Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակը, որով գրասենյակն իր մտահոգությունն էր հայտնում «վերջին ժամանակներս շատացած ատելության խոսքի եւ մարդու իրավունքների և ԼԳԲՏԻ ակտիվիստների նկատմամբ բռնության սպառնալիքների դեպքերով»՝ կոչ անելով Հայաստանի իշխանություններին ըստ օրենքի հետաքննել և դատական կարգով հետապնդել ԼԳԲՏԻ համայնքի անդամների նկատմամբ ոտնձգությունների եւ չարաշահումների դեպքերը¹⁷:
- Ի պատասխան Երևանում հավատարմագրված մի շարք դիվանագիտական ներկայացուցչությունների հայտարարության՝ ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակը 10.04.2019 թ. հանդես եկավ պատասխանով¹⁸: Պատասխանում մամուլի խոսնակը, ընգծելով ՀՀ կառավարության հավատարմությունը մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման իր պարտավորություններին, նշում է, որ մարդու իրավունքները, որպես կանոն, արդյունավետորեն գործում են, եթե մաս են դառնում հասարակական կոնսենսուսի և ընկալվում են, որպես համընդհանուր հասարակական և բարոյական արժեքներ¹⁹: Այս նկատառմամբ՝ ըստ մամուլի խոսնակի. «Միջազգային գործընկերները պետք է առավել հարգանք և զգայունություն ցուցաբերեն հայկական հասարակության հանդեպ և ձեռնպահ մնան հասարակական քննարկումների անհարկի ուղղորդումից, եթե անգամ նրանք համաձայն չեն դրանց տոնայնության հետ»²⁰: ՀՀ ԱԳՆ նշված պատասխանը խիստ բացասաբար ընդունվեց հայաստանյան քաղաքացիական հասարակության կողմից:
- «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և ՄԻՏ Երևանի հետ համատեղ, դիմում ներկայացվեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին՝ ի թիվս այլնի պահանջելով ձևավորել Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով՝ Նաիրա Չոհրաբյանի, Գագիկ Ծառուկյանի, Գևորգ Պետրոսյանի և Վարդան Ղուկասյանի արտահայտությունները որպես պատգամավորի Էթիկայի կանոնների խախտում ճանաչելու հարցը քննարկելու համար²¹, ինչն այդպես էլ ի կատար չածվեց:

Կին իրավապաշտպան Լարա Ահարոնեանի նկատմամբ ատելության խոսքի նոր ալիք բարձրացավ ԱԺ-ում 2019 թվականի մարտի 8-ին «Քաղաքացիական հասարակություն - Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառմանն իր ելույթում հնչեցրած մտքերի համար: Կին իրավապաշտպանը մասնավորապես ընդգծում էր քաղաքականությունների մշակման ընթացքում առանց խտրականության բոլոր կանանց շահերը հաշվի առնելու անհրաժեշտությունը²²: Կին իրավապաշտպանի՝ վերը նշված ելույթից հետո նրա հասցեին հնչեցին նրան սպանելու, բռնաբարելու և ընտանիքին վնասելու սպառնալիքներ: «Սրա նմաններին պետք է վառել մեր անհանդուրժողականության ու ժխտողականության կրակի վրա», - իր ֆեյսբուքյան գրառման մեջ նշում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հայկյանցը²³:

- Հանրային գործունեություն իրականացնող անձանց, այդ թվում պաշտոնատար անձանց կողմից Լարա Ահարոնեանի թիրախավորումը, բռնության կոչերը, ատելության խոսքն ու թշնամանքը դատապարտող որևէ հայտարարություն չեղավ: Անդրադառնալով նշվածին՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության համահիմնադիր Գոհար Շահնազարյանը մեզ հետ զրույցում նշում է, որ չնայած մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ընդհանուր առմամբ արձանագրված դրական տեղաշարժերին, իրավապաշտպանների դեմ ոտնձգությունների դեպքերին ՀՀ պետական մարմինների կողմից համարժեք արձագանք չի տրվում:
- Ի տարբերություն հայաստանյան պետական պաշտոնյաներին ու հանրային գործիչներին՝ Լարա Ահարոնեանի նկատմամբ ատելության խոսքը, առցանց հարձակումները և թշնամանքը դատապարտող հայտարարություններով հանդես եկան մի շարք տեղական, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններ, այդ թվում Հյուսիսային Կովկասի հիմնադրամը (Օսլո, Նովեգիա)՝ ՀՀ պետական մարմիններին կոչ անելով ձեռնարկել իրավապաշտպանի շահերի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ²⁴:
- Հայտարարությամբ, մասնավորապես, հանդես են եկել նաև ՄԻՏ Երևանն ու «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ պետական մարմիններին, ի թիվս այլնի, անելով հետևյալ առաջարկությունները. (1) ՀՀ Կառավարությունը պետք է ընդունի գենդերային զգայուն քաղաքականություն՝ իրավապաշտպանների պաշտպանության գործում հստակ գենդերային հեռանկարներով, (2) ՀՀ Կառավարությունը պետք է ընդունի, որ իրավապաշտպանների արդյունավետ պաշտպանությունն ու նրանց հետ համագործակցությունը Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության գործում առաջնահերթություն է, (3) ՀՀ Կառավարությունը պետք է գործի ՄԱԿ-ի կին իրավապաշտպանների բանաձևի շրջանակներում, հրապարակայնորեն ընդունի նրանց գործունեության կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում, հասցեագրի բոլոր տարիքային խմբերի կին իրավապաշտպանների հանդեպ խտրականությունը և բռնությունը, միջոցներ ձեռնարկի նրանց պաշտպանության համար: Բացի այդ, ՀՀ Կառավարությունը պետք է ընդունի իրագեկման քաղաքականություն՝ այդպիով նպաստելով իրավապաշտպանների գործունեության օրինականությանը²⁵:

1.4.

Ցմահ ազատագրված դատապարտված անձանց հարցերով մասնագիտացված լրագրող, փաստաբան Չարուհի Մեջլումյանը 2019 թվականի սկզբին հայտնվեց ատելության խոսքի, վիրավորանքի ու սպառնալիքների թիրախում: Լրագրող-փաստաբանի թիրախավորումը պայմանավորված էր իր ամուսնու՝ ցմահ դատապարտյալ Միեր Ենոքյանի կողմից ներման խնդրագիր ներկայացնելու հանգամանքի հետ: Վերջինիս հետ լրագրողն ամուսնացել էր 2013 թվականին, սակայն ամուսնության փաստը հասարակության լայն զանգվածներին հայտնի դարձավ միայն 2019 թվականին՝ ներման խնդրագրի ներկայացման հետ կապված: Ցմահ ազատագրվածների խնդիրների բարձրացմանն ուղղված լրագրողի բազմամյա մասնագիտական գործունեությունը որակվեց՝ որպես անձնական մղումներով դրդված, այնինչ Չարուհի Մեջլումյանը նշված խնդրով սկսել էր զբաղվել դեռևս 2010 թվականից:

- Պետական պաշտոնյաների, ինչպես նաև հանրային գործունեություն իրականացնող այլ անձանց կողմից Չարուհի Մեջլումյանին պաշտպանելու և աջակցելու հրապարակային հայտարարություններ չեղան:
- Ավելին, լրագրող-փաստաբանի պնդմամբ՝ ցմահ դատապարտյալներից հատկապես Սողոմոն Քոչարյանի²⁶ գործի վերաբացումից հետո ինքը մշտապես գտնվել է նախկին իշխանությունների թիրախում: Ըստ այդմ էլ՝ Միեր Ենոքյանի գործով ներկայիս զարգացումները Չարուհի Մեջլումյանը, մեծ հաշվով, գնահատում է որպես ներկայիս իշխանությունների դեմ նույն ուժերի կողմից ուղղորդված մանիպուլյացիոն քայլ: Ինչպես նշել ենք վերևում, Չարուհի Մեջլումյանը ցմահ դատապարտյալների գործերով սկսել էր զբաղվել դեռևս 2010 թվականից և ինչպես ինքն է նշում. «ցմահ դատապարտյալների 11 գործերից 4-ով ինքն անձամբ է ի հայտ բերել նոր երևան եկած հանգամանքներ»:
- Չարուհի Մեջլումյանի պաշտպանությամբ հանդես եկավ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան: Տարածված հայտարարությանը միացավ նաև ՄԻՏ Երևանը, որով դատապարտվեց լրագրող-փաստաբանի թիրախավորումը՝ անթույլատրելի համարելով կնոջ մասնավոր կյանքին միջամտելու և հանրային դաշտում նրան թիրախավորելու գործելաոճը²⁷:

1.5.

Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնության անդամ, բնապահպան-իրավապաշտպան Աննա Շահնազարյանը 2019 թ. հուլիսի 6-ին Ամուլսարի պահպանների համար կազմակերպված դրամահավաքի վայրից խարդախություն կատարելու հիմքով բերման ենթարկվեց ոստիկանական բաժանմունք. խարդախություն էր որակվել դրամահավաքի կազմակերպումն ու անցկացումը՝ ՄԻՏ Երևան: Աննա Շահնազարյանին բերման ենթարկելիս չէին նշվել բերման ենթարկելու օրինական հիմքերը: Տեղի ունեցածն առաջ բերեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դժգոհությունը, միջադեպը լայնորեն քննարկվեց «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Ոստիկանության գործողությունների օրինական և համաչափ լինելու խնդրին անդրադարձան նաև պետական պաշտոնյաներ: Այսպես.

- Իր 08.07.2019 թ. ֆեյսբուքյան գրառման մեջ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Լենա Նազարյանը («Իմ քայլը» դաշինք), կասկածի տակ առնելով հնարավոր խարդախության առկայության, ինչպես նաև փաստաթղթեր ու թույլտվություններ ներկայացնելու պահանջի վերաբերյալ ոստիկանության հիմնավորումները, նշում է. «Տարակուսում եմ, թե ինչո՞ւ ոստիկանությունում այս հանրահայտ իրողությունն ընկալելի չէ և ինչո՞ւ են քաղաքացիները տարվում ու պահվում օրենքով չարգելված գործունեության համար:»²⁸:
- 2019 թ. հուլիսի 7-ին տարածված հայտարարության մեջ ՀԲԾ-ն ոստիկանության գործողությունները որակեց ապօրինի՝ նշելով, որ իրենք հետամուտ են լինելու, որպեսզի «բնապահպանների՝ օրենքով չարգելված գործունեության նկատմամբ այս կոպիտ միջամտությունը պատժվի»²⁹:

1.6.

Փաստաբանների վիճակի մշտադիտարկման արդյունքները մեզ թույլ են տալիս արձանագրելու, որ հաշվետու ժամանակահատվածում, ինչպես և 2018 թվականի ընթացքում, թիրախում առավելապես հանրային հնչեղություն ունեցող գործերով պաշտպանություն իրականացնող փաստաբաններն են: Նշվածն առավելապես պայմանավորված է հասարակության լայն շրջանակների կողմից փաստաբանի դերի թյուր ընկալմամբ, ինչպես նաև փաստաբան-պաշտպանին իր պաշտպանյալի հետ նույնացմամբ: Եթե նախկինում փաստաբանների թիրախավորումը հիմնականում առցանց տիրույթում էր, 2019 թվականին արդեն արձանագրվեց փաստաբաններից Արսեն Մկրտչյանին իրական կյանքում հետապնդման ենթարկելու, նրա տեղաշարժի ազատությունը սահմանափակելու և գույքին վնաս հասցնելու դեպք³⁰: Փաստաբանի նկատմամբ հետապնդումներն առաջ բերեցին փաստաբանական համայնքի հակազդեցությունը, խնդրին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետը: Այսպես.

- 2019 թ. հունվարի 14-ին ՀՀ փաստաբանների պալատում նշված դեպքի քննարկման կապակցությամբ հրավիրվեց ակումբի նիստ, որով փաստաբանները իրենց մտահոգությունը հայտնեցին իրենց գործընկեր-փաստաբանների անվտանգության վերաբերյալ. փաստաբանների գնահատմամբ տեղի ունեցածը սպառնալիք է արդարադատության հանդեպ³¹:
- ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, խոսելով փաստաբաններին իրենց պաշտպանյալների հետ նույնացնելու անթույլատրելիության մասին, ընդգծեց փաստաբանների դերի կարևորությունը արդարադատության կայացման գործում³²:

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին, ՀՀ վարչապետին ու կառավարության անդամներին, զանգվածային լրատվության միջոցներին, հանրային գործունեություն իրականացնող այլ անձանց՝

- հրապարակայնորեն դատապարտել իրավապաշտպանների նկատմամբ բռնության ու խտրականության բոլոր դեպքերը՝ հրապարակային հայտարարությունների, ինչպես նաև քաղաքականություններ և (կամ) օրենքներ ընդունելու միջոցով,
- հրապարակայնորեն ընդունել իրավապաշտպանների դերի կարևորությունն ու լեգիտիմությունը մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության հաստատման և իրավունքի գերակայության խթանման հարցում:

ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՃՆՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Այս չափորոշիչը վերաբերում է ճնշումների, վախեցնելու, վարկաբեկելու բոլոր ձևերին և բոլոր այն բացասական գործողություններին, որոնք միտումնավոր ուղղված են իրավապաշտպաններին վնասելուն՝ լինեն դրանք պետության, թե ոչ պետական սուբյեկտների կողմից կազմակերպված³³:



Նկարագրություն. 2019 թվականն առանձնացավ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դեմ կազմակերպված ուղղորդված շարժմամբ: Շարժման թիրախն առավելապես Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանն Էր (այսուհետ՝ Հիմնադրամ) և նրա շահառուները: Հիմնադրամի դեմ արշավը նախ սկսվեց առցանց տիրույթում, երբ նախկին իշխանությունների հետ ասոցացվող՝ քաղաքական և նեղ անձնային շահեր հետապնդող առանձին խմբեր և անհատներ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, ինչպես նաև նրանց հետ «համագործակցող» լրատվամիջոցներով սկսեցին տարածել տեղեկատվություն առանձին հասարակական կազմակերպություններին, նախաձեռնություններին և անհատներին Հիմնադրամի տրամադրած դրամական միջոցների վերաբերյալ՝ նշելով գումարի չափը, նպատակը, ծրագրի հակիրճ բովանդակությունը և այլն:

- Թիրախում, մասնավորապես, հայտնվեցին «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնությունը, «Կանանց ռեսուրսային կենտրոն», «Փինք» և մի շարք այլ հասարակական կազմակերպություններ ու անհատներ: Թիրախավորվեցին նաև ներկայիս բարձաստիճան մի շարք պաշտոնյաներ, որոնք նախկինում ընդգրկված են եղել տարբեր հասարակական կազմակերպություններում: Նշվածը ինդրահարույց է հատկապես նրանով, որ այդ պաշտոնատար անձանց ներկայիս օրենսդիր և պետական այլ գործունեությունը ներկայացվում էին որպես Հիմնադրամի շահերին սպասարկող, հակապետական և ապագային:
- Ի թիվս այլևի, նշված Հիմնադրամից դրամաշնորհ ստացած անձինք և կազմակերպությունները բնորոշվում էին որպես «սորոսականներ», «ծախու արարածներ», «Սորոսի սպասավորներ», իսկ նրանց գործունեությունը՝ որպես հայ ավանդական ու ազգային արժեքներին հակասող, հայ ընտանիքի և հասարակության հիմքերը խարխլող:
- Առավել ցայտուն է «Ռեստարտ» նախաձեռնության օրինակը. նախաձեռնությունը բազմիցս մեղադրվել է մեծ չափերի դրամաշնորհ ստանալու, ստացած դրամաշնորհը համալսարանի ներքին կյանքին միջամտելու նպատակով օգտագործելու մեջ, մինչդեռ,

ինչպես պարզվեց հետազայում, համալսարանն ինքը բազմիցս դրամաշնորհներ է ստացել նույն Հիմնադրամից:

- Առցանց տիրույթում քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, Հիմնադրամի դեմ սանձազերծված արշավը տեղափոխվեց իրական կյանք: Այսպես կոչված «ՎԵՏՕ» շարժումն օրեր շարունակ բողոքի ակցիաներ իրականացրեց Հիմնադրամի գրասենյակի դիմաց՝ փաստացի փակելով դրա մուտքը: Բողոքի ակցիաներն սկսվեցին 2019 թ. մայիսի 31-ին և ընդհատումներով շարունակվեցին մինչև հունիսի 11-ը:
- Նշված բողոքի ակցիաների պատճառով խաթարվել էր Հիմնադրամի բնականոն գործունեությունը, ինչպես նաև աշխատակիցների ազատ ելումուտը գրասենյակի տարածք: Ակցիաների մասնակիցների մուտքը Հիմնադրամի գրասենյակի տարածք հնարավոր եղավ կանխել միայն տեղում ոստիկանական ուժերի ներկայության շնորհիվ³⁴:
- Ի պաշտպանություն Հիմնադրամի՝ հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ՝ 66 կազմակերպություններ, հանդես եկան համատեղ հայտարարությամբ³⁵: Անդրադառնալով «քաղաքացիների մի խմբի կողմից» հիմնադրամի գրասենյակի մոտ իրականացված ցույցերի թիրախավորված բնույթին, հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանների նկատմամբ սադրանքներին, Հիմնադրամի աշխատակիցների նկատմամբ սպառնալիքներին, ազգային շահերի անվան տակ բռնության, ատելության խոսքի տարածման դրսևորումներին, դրանք որակվեցին անընդունելի՝ հենց մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Եզրափակելով՝ համատեղ հայտարարությամբ հանդես եկած կազմակերպություններն իրավապահ մարմիններին կոչ արեցին միջոցներ ձեռնարկել հասարակական կարգը պահպանելու, աշխատակիցների և այցելուների անարգել ու անվտանգ տեղաշարժն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև կանխել հնարավոր ոտնձգությունները մարդկանց կյանքի, առողջության ու գույքի նկատմամբ: Դատապարտող այլ հայտարարություններ չեղան:

Առաջարկություններ

ՀՀ ոստիկանությանն ու իրավապահ այլ մարմիններին՝

- ձեռնպահ մնալ իրավապաշտպանների նկատմամբ ճնշման միջոցներ կիրառելու բոլոր տեսակի գործողություններից,
- նմանատիպ գործողությունները ոչ պետական սուբյեկտների կողմից թույլ տալու դեպքում ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ իրավապաշտպանների իրավունքների, օրինական շահերի պաշտպանության ու անվտանգության ապահովման նպատակով:

ԿԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ

*Իրավապաշտպանները չպետք է կամայականորեն կալա-
նավորվեն կամ ձերբակալվեն «իրենց իրավունքներն ու
հիմնարար ազատություններն, ինչպիսիք են՝ արտա-
հայտվելու, խաղաղ հավաքներ ու միություններ կազմելու
իրավունքներն իրացնելու պատճառով»³⁶:*



Նկարագրություն. 2019 թվականի ընթացքում իրավապաշտպաններին կամայական ձերբակալման ու կալանավորման դեպք, որպես այդպիսին, չի արձանագրվել, բացառությամբ՝ բնապահական-իրավապաշտպան Աննա Շահնազարյանին առանց բավարար հիմքերի ոստիկանական բաժանմունք բերման ենթարկելու դեպքի: Անձի անձնական ազատությանը միջամտությունը բերման ենթարկելու դեպքում ի համեմատություն ձերբակալման կամ կալանքի, նվազ ծանր է, սակայն հաշվի առնելով դեպքի հանգամանքները և հնարավոր բացասական հետևանքները, այն է՝ խաղաղ հավաքների ազատության խոչընդոտում և անհարկի միջամտություն իրավապաշտպան գործունեությանը, միջադեպը դատապարտելի է և համապատասխան արձագանքի արժանացավ իրավապաշտպան համայնքի կողմից, ինչին անդրադարձել ենք սույն գեկույցի առաջին՝ «Հանրային աջակցություն իրավապաշտպաններին» բաժնում: Միջադեպի հանգամանքները քննության առնվեցին ՀՀ ոստիկանության կողմից, բացի այդ՝ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) կողմից ևս եղավ իրավական միջամտություն տեղի ունեցածին: Այսպես.

- ՄԻՊ-ը սեփական նախաձեռնությամբ սկսել էր քննարկման ընթացակարգ, իսկ ավելի ուշ Աննա Շահնազարյանը նաև գրավոր բողոք էր ներկայացրել ՄԻՊ-ին: Բարձրացված հարցերի կապակցությամբ համապատասխան պարզաբանումների պահանջով ու կոնկրետ հարցադրումներով ՄԻՊ-ը գրություն էր հասցեագրել ՀՀ ոստիկանություն³⁷:
- Դրամահավաքի անցկացմանը խոչընդոտած և Աննա Շահնազարյանին առանց բավարար հիմքերի ոստիկանական բաժանմունք ներկայացրած ոստիկանների նկատմամբ կիրառվեց կարգապահական տույժ՝ իրենց գործառնության չարտակա-
նությունների կատարման մեջ թերանալու հիմքով:
- Աննա Շահնազարյանի փոխանցմամբ՝ ոստիկաններին կարգապահական տույժի ենթարկելու մասին իրեն հայտնել էին ՄԻՊ գրասենյակից՝ ի պատասխան վերը նշված գրության: Անձամբ ինքը ՀՀ ոստիկանությունից որևէ գրություն կամ ինչպես ինքն է նշում, «պաշտոնական ներողություն» չի ստացել: Իրեն նաև հայտնի չէ, թե կոնկրետ ի՞նչ կարգապահական տույժ է կիրառվել նշված ոստիկանների նկատմամբ. չնայած



ՄԻՊ գրասենյակից ստացված հավաստիացումների, որ միջոցներ կձեռնարկեն պարզելու կարգապահական տույժի մանրամասները, որևէ տեղեկություն ինքն այդպես էլ չի ստացել:

Առաջարկություններ

ՀՀ ոստիկանությանն ու իրավապահ այլ մարմիններին՝

- իրավապաշտպանների՝ հետապնդման ենթարկվելու դեպքում իրականացնել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ջնսություն՝ դեպքի հանգամանքները պարզելու, մեղավոր անձանց պատասխանատվության կանչելու ուղղությամբ,
- իրականացնել իրավապաշտպանների նկատմամբ հետապնդումների առանձնացված հաշվառում ու մշտադիտարկում:

ԽԱՂԱՂ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

Պետությունները պետք է ապահովեն, որ «իրավապաշտպաններն ի վիճակի լինեն իրենց կարևոր գործունեությունը վարել խաղաղ բողոքի ցույցերի համատեքստում»³⁸:



Նկարագրություն. Ի զորակցություն Ամուլսարի պահապանների՝ 2019 թվականի օգոստոսի 19-ին անցկացված խաղաղ ակցիայի ժամանակ ոստիկանների կողմից ակցիայի մասնակիցների նկատմամբ կիրառվեց անհամաչափ ուժ, սահմանափակվեց ակցիայի մասնակիցների հավաքների ազատությունը, որը զուգակցվեց մի շարք անձանց նկատմամբ անհամաչափ ուժի կիրառմամբ: Ի թիվս այլոց, անհամաչափ ուժ կիրառվեց իրավապաշտպան Չարուհի Հովհաննիսյանի և «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Գայանե Սարիբեկյանի նկատմամբ:

- Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման, հավաքների ազատության իրավունքի սահմանափակման այս դեպքը չարժանացավ ներկայիս իշխանությունների քննադատությանը, տեղի ունեցածին քաղաքական գնահատական չտրվեց, որևէ մեկին պատասխանատվության կանչելու հարց չբարձրացվեց:
- Իրավապաշտպան Չարուհի Հովհաննիսյանն ինքը հանդես եկավ ոստիկանության գործելաոճի խիստ քննադատությամբ, թեպետ հրաժարվեց իրավական պաշտպանության միջոցների դիմելուց³⁹:



Առաջարկություններ

ՀՀ ոստիկանությանն ու իրավապահ այլ մարմիններին, Երևանի քաղաքապետին՝

- ձեռնպահ մնալ իրավապահ մարմինների կողմից խաղաղ բողոքի ցույցերի ժամանակ անհամաչափ ուժի կիրառումից,
- ոյուրացնել հանրային տարածքի հասանելիությունը և ապահովել բողոքի ցույցերի հարթ անցկացումը՝ առանց իրավապահ մարմինների կողմից բռնության անպատեհ կիրառման:

ՊԱՅՔԱՐ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ

Պետությունները պետք է «պայքարեն անպատժելիության դեմ քննելով և պատասխանատվության ենթարկելով բոլոր այն սուբյեկտներին՝ լինեն դրանք պետական կամ ոչ պետական, որոնք հարձակվում կամ սպառնում են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անհատներին, խմբերին կամ հաստատություններին»⁴⁰:



Նկարագրություն. Իրավապաշտպանների նկատմամբ հատկապես սպառնալիքների գործերով իրավապահ մարմինների կողմից քրեական գործեր հիմնականում չեն հարուցվում, իսկ հարուցված քրեական գործերը կարճվում են՝ հիմնականում հանցակազմի բացակայության հիմքով: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածով սահմանված արարքի մասով, այն է՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու և գույքը ոչնչացնելու սպառնալիքը, ըստ իրավապահ մարմինների հիմնավորման՝ բացակայում են սպառնալիքի «իրական» և «կոնկրետ» լինելու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ ներկայացվող պահանջները:

5.1.

Լարա Ահարոնեանի դեմ վերը նկարագրված սպառնալիքների դեպքերով՝ սպառնալիքներ հնչեցրած անձանց հայտնաբերելու և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կին իրավապաշտպանը բազմիցս հաղորդումներ է ներկայացրել ՀՀ իրավապահ մարմիններին: Գոհար Շահնազարյանը («Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ) մեզ հետ զրույցում հայտնեց, որ սույն զեկույցի կազմման պահին հաղորդումներից մի քանիսի հիման վրա հարուցված քրեական գործերով նախաքննությունը շարունակվում է, և որ սպառնալիքներ տված անձինք դեռևս հայտնաբերված չեն: Ըստ իրավապահ մարմինների բանավոր պնդումների՝ սպառնալիքներ հնչեցրած անձանց հայտնաբերումը դժվարանում է՝ նման սպառնալիքները հիմնականում կեղծ օգտահաշիվներով անելու հանգամանքով պայմանավորված, ինչն էլ դժվարացնում է այդ մարդկանց հայտնաբերելու աշխատանքները, իսկ Այ-Փի հասցեները (Internet Protocol Address) ճշտելու նպատակով «Ֆեյսբուք» ընկերությանը կատարված հարցումների պատասխանները ուշանում են:

5.2.

Լրագրող, փաստաբան Չարուհի Մեջլումյանի կողմից մարդու կյանքի և առողջության, սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված մի շարք հանցագործությունների, այդ թվում՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու վերաբերյալ ոստիկանության ներկայացված հաղորդումների քննության արդյունքներով քրեական գործի հարուցումը ևս մերժվել է՝ բոլոր դրվագներով: Մեզ հետ հարցազրույցում Չարուհի Մեջլումյանն այս կապակցությամբ հայտնեց, որ իրենց կողմից մերժման որոշումները բողոքարկվել են դատական կարգով. առաջին ատյանի դատարանը քննչական մարմնի որոշումը թողել է անփոփոխ, սակայն իրենք նպատակադրված են գործը հասցնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Նշված գործերի վերջնական արդյունքները սույն զեկույցի կազմման պահին առկա չեն:

5.3.

Մեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից կազմակերպված գրքի շնորհանդեսի հարկադրական դադարեցման ու հատկապես մասնակիցներից մեկի վրա ծուկ նետելու առթիվ կենտրոնի կողմից ներկայացված հաղորդման քննության արդյունքներով քրեական գործի հարուցումը ևս մերժվել է՝ կրկին հանցակազմի բացակայության հիմքով: Մերժումը բողոքարկվել է դատական կարգով, որի քննությունը սույն զեկույցի կազմման պահին շարունակվում է:

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, ՀՀ ոստիկանությանն ու իրավապահ այլ մարմիններին՝

- պատշաճ կերպով ու ջանասիրությամբ հետաքննել իրավապաշտպանների նկատմամբ հարձակումներն ու սպառնալիքները,
- իրավապաշտպաններին տրամադրել դատավարական և այլ երաշխիքներ, դատավարությունների ընթացքում պատշաճ կերպով պաշտպանել հարձակումների զոհ-իրավապաշտպաններին, այդ թվում՝ աջակցություն տրամադրելով և հրապարակայնորեն դատապարտելով հարձակումները:

ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ

Բնապահպան իրավապաշտպանները հաճախ են ընդգծում պետության ու մասնավոր ընկերությունների համար անհարմար ճշմարտություններ, ու դրա համար ենթարկվում են բռնության ու այլ բռնարարքների ինչպես պետության, այնպես էլ ոչ պետական սուբյեկտների կողմից⁴¹:



Նկարագրություն. «Լիդիան-Արմենիա» մասնավոր հանքարդյունաբերող ընկերության կողմից բնապահպան-ակտիվիստների դեմ զրպարտության, ինչպես նաև ընկերության գործարար համբավն արատավորող արտահայտությունների վերաբերյալ դատական գործերն սկսվել էին դեռևս 2018 թվականին՝ շարունակվելով հաշվետու ժամանակահատվածում⁴²: ՀԲԾ քաղաքացիական նախաձեռնության անդամ Աննա Շահնազարյանի պնդմամբ՝ դրանք բնապահպանների ծավալած գործունեության համատեքստում գնահատվում են որպես ոտնձգություն բնապահպան-ակտիվիստների խոսքի ազատության դեմ: Ավելին, բնապահպան-իրավապաշտպանը դրանք որակում է որպես հետապնդում բնապահպանների նկատմամբ՝ հատկապես նկատի ունենալով ՀՀ դատական համակարգի ներկայիս վիճակը (ոչ անաչառ և ոչ օբյեկտիվ լինելը՝ ՄԻՏ Երևան): Բնապահպան Լևոն Գալստյանի գնահատմամբ էլ՝ նշված զրպարտության գործերն իրենց նկատմամբ հոգեբանական ճնշման միջոց են. դրանք խլում են իրենց ժամանակը, իսկ դատական պաշտպանության համար ֆինանսական միջոցների բացակայությունը բնապահպան-ակտիվիստներին դնում է էլ ավելի դժվար կացության մեջ⁴³: Դատական գործերից բացի, բնապահպան-ակտիվիստների դեմ եղել են նաև առցանց հետապնդման դեպքեր:

■ 2018 թվականի հունիսից սկսած «Լիդիան Արմենիա» ընկերությունը⁴⁴ 9 քաղաքացիական հայցերով դիմել է դատարան, որոնցից 8-ը՝ զրպարտության, ինչպես նաև ընկերության գործարար համբավն արատավորող արտահայտությունների համար: Նշված քաղաքացիական հայցերը ներկայացվել են ինչպես բնապահպան-ակտիվիստների, այնպես էլ Ջերմուկ քաղաքի բնակիչների դեմ, մասնավորապես՝ Լևոն Գալստյան, Անի Խաչատրյան, Թեհմինե Ենոքյան, Հայկ Գրիգորյան, Սերգեյ Բագրատյան, Նազելի Վարդանյան, Շիրակ Բունիաթյան և Էդմոն Աղաբեկյան: Ի դեպ, խոսքը գնում է ոչ միայն հրապարակային ելույթներում, այլև ֆեյսբուքյան անձնական էջերում բնապահպանների և տեղի բնակիչների կողմից արված արտահայտությունների ու կատարված գրառումների մասին: Նշված 8 հայցերից յուրաքանչյուրով ներկայացված է մեկ միլիոն ՀՀ դրամի փոխհատուցման, ինչպես նաև հերքում տալու վերաբերյալ պահանջներ: Բացի այդ՝ որոշ դեպքերում կիրառվել են նաև հայցի ապահովման միջոցներ, այն է՝ ընկերության դեմ ուղղված զրպարտություն պարունակող տեղեկության տարածման սահմանափակում, ինչպես նաև կալանք՝ հաշիվների ու գույքի վրա:

- Բացի նշված 8 հայցերից՝ Լիդիան Արմենիայի կողմից ներկայացվել է 1 կոլեկտիվ հայց՝ 28 քաղաքացիների դեմ, այդ թվում՝ բնապահպան թեմինե Ենոքյանի՝ 80.000 ԱՄՆ դոլարի չափով վնասի հատուցման պահանջով, հայցադիմումը վերադարձվել է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու և սահմանված ժամկետում թույլ տրված թերությունները չվերացնելու հիմքով⁴⁵:
- Անդրադառնալով կեղծ օգտահաշիվներին և Էջերին՝ բնապահպան Լևոն Գալստյանը նշում է, որ այդ խնդրին բախվել են 2018 թվականի մայիսից սկսած, երբ նոր ստեղծված և նույնականացման ոչ ենթակա օգտահաշիվներով ու Էջերով սկսվեց կեղծ և զրպարտչական տեղեկություններ տարածվել Ամուլսարի պահապանների և ակտիվիստների դեմ: Նմանատիպ օգտահաշիվներով և Էջերով հատկապես տարածվում են կեղծ տեղեկություններ պարունակող տեսանյութեր՝ «փորձելով սևացնել Ամուլսարի շահագործման դեմ բնապահպանների պայքարը»⁴⁶:

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, ՀՀ ոստիկանությանն ու իրավապահ այլ մարմիններին՝

- ընդունել համապատասխան քաղաքականություններ ու օրենքներ՝ մասնավոր ընկերություններին իրավապաշտպանների նկատմամբ սպառնալիքների կամ հարձակումների մեջ ներգրավվածության համար պատասխանատվության ենթարկելու նպատակով,
- հարգել, խթանել ու փորձել պաշտպանել բոլորի, ներառյալ՝ իրավապաշտպանների իրավունքներն ու հիմնարար ազատությունները,

Ոչ պետական սուբյեկտներին, ներառյալ՝ անդրազգային կորպորացիաներին ու այլ մասնավոր ձեռնարկություններին՝

- ձեռնպահ մնալ և խուսափել իրավապաշտպանների նկատմամբ հարձակումների, ճնշման, ահաբեկման գործողություններին հանցակից լինելուց, այդ թվում՝ բոլոր այն անձանց նկատմամբ կատարվող բռնարարքներից, որոնք իրացնում են արտահայտվելու, միավորվելու, հավաքների, բողոքի ցույցերի իրենց իրավունքները տվյալ բիզնեսի կամ դրա շահերի դեմ,
- հարգել, խթանել ու փորձել պաշտպանել բոլորի, ներառյալ՝ իրավապաշտպանների իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

ԿԻՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավապաշտպանների, ներառյալ կին իրավապաշտպանների գործունեության նկատմամբ հարգանքն ու աջակցությունը ընդհանուր առմամբ Էսկան նշանակություն ունի մարդու իրավունքների իրացման հարցում⁴⁷:



Նկարագրություն. Հաշվետու ժամանակահատվածում կին իրավապաշտպաններից թիրախում հայտնվել են հատկապես Լարա Ահարոնեանը, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կին ներկայացուցիչները, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հարցերով մասնագիտացված լրագրող, փաստաբան Չարուհի Մեջլումյանը և այլոք: Նշված դեպքերի մանրամասն նկարագրությունը, ինչպես նաև տեղի ունեցածին պետության ու հանրային գործունեություն իրականացնող անձանց, միջազգային հանրության ու իրավապաշտպան համայնքի արձագանքին մանրամասն անդրադարձել ենք սույն զեկույցի առաջին՝ «Հանրային աջակցություն իրավապաշտպաններին» բաժնում: Լարա Ահարոնեանը, մասնավորապես, նշում է, որ ինքը թիրախավորվել է հենց իր՝ կին լինելու համար, քանի որ միշտ հենց այդ հանգամանքն է շեշտադրվում: Ըստ իրավապաշտպանի՝ սպառնալիքների նպատակն իրավապաշտպաններին լռեցնելն է, քանի որ «հայրիշխանական, պահպանողական հասարակության մեջ թույլ չի տրվում, որ կինն արտահայտի իր կարծիքը տարբեր թեմաների շուրջ»: Խոսելով իր նկատմամբ առկա հետապնդումների մասին, Չարուհի Մեջլումյանն էլ նշում է. «այս ամենն անմիջական կապ ունի իմ իրավապաշտպան գործունեության և կին լինելու... հանգամանքի հետ», սակայն, ըստ լրագրող-փաստաբանի, այդպես էլ ճիշտ գնահատականի չի արժանացել իրավապահ մարմինների կողմից քրեական գործերի քննության ընթացքում:



Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը և պետական այլ մարմիններին՝

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանանց պաշտպանության համար և սեփական ջանքերում ներգծել գենդերային տեսանկյունը՝ իրավունքների պաշտպանության համար ապահով ու նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով,
- լուծել կին իրավապաշտպանների իրավունքների ոտնահարումների անպատժելիության խնդիրը և ապահովել կին իրավապաշտպանների մասնակցությունը նրանց պաշտպանությանը վերաբերող քաղաքականությունների ու ծրագրերի քննարկմանը:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաբաններն «առանցքային դերակատարում ունեն մարդու իրավունքները պահպանելու հարցում» և պետք է ի վիճակի լինեն «իրենց գործառույթներն իրականացնել ազատ, անկախ և առաց ճշման վախի»⁴⁸:



Նկարագրություն. Սույն զեկույցի առաջին՝ «Հանրային աջակցություն իրավապաշտպաններին» բաժնում ներկայացրել ենք փաստաբանների վիճակի ընդհանուր նկարագրությունը: Փաստաբաններից հատկապես Արսեն Մկրտչյանին կրկին անգամ թիրախավորելը հիմք հանդիսացավ կրկին շրջանառելու «փաստաբանին զրպարտելու, վիրավորանք հասցնելու, նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու, ինչպես նաև նրա ընտանիքի անդամին սպառնալու համար» քրեական պատասխանատվություն սահմանող օրենքի նախագիծը: Այն, սակայն, չընդունվեց, ինչը թերևս կարելի է բացատրել նրանով, որ առանձին խմբերի նկատմամբ վիրավորանքի քրեականացումը վերջին հաշվով կհանգեցնեք ընդհանրապես վիրավորանքի քրեականացմանը՝ ողջ ծավալով:

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, ՀՀ ոստիկանությանն ու պետական այլ մարմիններին՝

- փաստաբանների անկախությունը երաշխավորելու համար ձեռնարկել օրենսդրական, իրավակիրառ և այլ անհրաժեշտ արդյունավետ միջոցներ, որոնք փաստաբաններին թույլ կտան իրենց մասնագիտական գործառույթներն իրականացնել պատշաճ կերպով,
- հավելյալ միջոցներ ձեռնարկել իրենց երկակի՝ իրավաբան-իրավապաշտպան դերակատարման պատճառով առավել վտանգի ենթարկված փաստաբաններին պաշտպանելու ուղղությամբ,



Հանրային կյանքի բոլոր ոլորտներում առաջնորդություն դրսևորող անձանց, զանգվածային լրատվության միջոցներին՝

- հրապարակայնորեն ընդունել հրավապաշտպան փաստաբանների կարևոր ու լեգիտիմ դերակատարումը մարդու իրավունքները, ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունը խթանելու հարցում, խուսափել հրավապաշտպան փաստաբաններին խարանելուց:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետությունները պետք է «ապահովեն, որ օրենսդրությունը, քաղաքականությունն ու իրական պրակտիկաները չխանգարեն փոքրամասնություններին պատկանող անձանց կամ նրանց շահերը պաշտպանող քաղաքացիական հասարակության իրավունքների իրացմանը»⁴⁹:



Նկարագրություն. Փոքրամասնություններին պատկանող կամ փոքրամասնական հայացքներ ունեցող անձանց իրավունքները պաշտպանող անձինք ու միությունները չպետք է ենթարկվեն խարանման և խտրականության⁵⁰: Ըստ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի փոխանցած տվյալների՝ 2019 թվականին՝ նախորդ տարվա համեմատությամբ, սեռական կողմնորոշման և (կամ) գենդերային ինքնության հիմքով կատարված իրավախախտումների աճ է գրանցվել. 36 իրավախախտում 25-ի համեմատությամբ: Նշվածն, ըստ ՀԿ-ի գործադիր տնօրեն Մամիկոն Հովսեփյանի, որոշ չափով պայմանավորված է նաև տեղի ունեցած միջադեպերին իրավապահների կողմից ոչ համարժեք արձագանք տալու հանգամանքով: Մասնավորապես Շուռնուխի գործով, ըստ Մամիկոն Հովսեփյանի, իրավապահների կողմից ամեն ինչ արվեց գործը համաներմամբ «փակելու» համար: Փոքրամասնություններին պատկանող անձանց կամ նրանց շահերը պաշտպանող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դեմ ուղղված բռնության, սպառնալիքների, խտրականության և խարանավորման դեպքերից ամենախնդրահարույցը, թերևս, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ, տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ խտրականության ու խարանման դեպքն էր, որին՝ հանրային աջակցության տրամադրման մասով մանրամասն անդրադարձել ենք սույն գեկույցի առաջին՝ «Հանրային աջակցություն իրավապաշտպաններին» բաժնում: Ստորև ներկայացնում ենք Լիլիթ Մարտիրոսյանի դեմ ուղղված սպառնալիքներին, այդ թվում՝ կյանքի դեմ ուղղված սպառնալիքներին, նրա հետագա թիրախավորմանն ու խարանմանը: Այսպես.

■ Սոցիալական ցանցերում և լրատվական միջոցներով տարածվեց մի տեսակյութ, որտեղ այսպես կոչված «Արծիվ-30 Արարատ» մահապարտների գնդի անդամներից մեկը, հայտարարելով տրանսգենդերների դեմ մեծամասշտաբ պայքար սկսելու մասին, ենթադրաբար հենց Լիլիթ Մարտիրոսյանի հասցեին հնչեցրեց սպանության սպառնալիք, ասելով. «Տրանսգենդերներից մեկին, որ սատկացնեք, մեզ մարդասպան չսարքեք»⁵¹: Մեկ այլ դեպքում՝ Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) համագումարում նախագահի ընտրությունից հետո միության անդամ Արարատ Խանդոյանն առաջարկեց ԵԿՄ օրակարգային խնդիրների մեջ ավելացնել ԼԳԲՏ համայնքի

անդամների վերացման հարցը⁵²:

- ՀՀ Ազգային ժողովում 2019 թ. ապրիլի 5-ին Լիլիթ Մարտիրոսյանի ունեցած ելույթից հետո մի խումբ անձինք, այդ թվում՝ հոգևորականներ, բողոքի ակցիաներ կազմակերպեցին ԱԺ շենքի դիմաց՝ ընդդեմ Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ-ում ունեցած ելույթի՝ պահանջելով հանդիպում ԱԺ ղեկավարության հետ: Ցույցերին միացան նաև մեր կողմից արդեն իսկ հիշատակված «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավորներից ոմանք⁵³: Ցույցերին մասնակցած հոգևորականներից Տեր Ղազարի պնդմամբ՝ ելույթի նպատակը ժողովրդին ապականելն էր, պղծության վարժեցնելն ու պղծելը: Հոգևորականն անգամ պահանջեց խնկարկել ԱԺ ամբիոնը:
- Ապրիլի 5-ի բողոքի ակցիայի ժամանակ Aysor.am լրատվական կայքի հետ հարցազրույցում բողոքի մասնակից քաղաքացիներից մեկն էլ սպանության սպառնալիք հնչեցրեց ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների հասցեին: Այսպես՝ մոտից հանելով դանակը և դրանով վիզը կտրելու նշան ցույց տալով՝ քաղաքացին ասում է, որ դրանով պատրաստ է «ուտիլիզացնել սեռական փոքրամասնություններին»: Նշված փաստի առթիվ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում թեև նյութեր նախապատրաստվեցին, սակայն քրեական գործի հարուցումը մերժվեց՝ հանցակազմի բացակայության հիմքով⁵⁴:
- Այնուհետև, բողոքի ակցիա կազմակերպվեց 2019 թ. ապրիլի 12-ին՝ Հանրային հեռուստառադիոընկերության դիմաց՝ «Հայկական արժեքների պաշտպանության «Կամք»» նախաձեռնության կողմից: Ակցիայի նպատակն էր՝ «պարզաբանում ստանալ հեռուստառադիոընկերության ղեկավարությունից ապրիլի 5-ին ԱԺ-ի ամբիոնից տրանսգենդերի ելույթը «Հանրային» հեռուստաալիքով եթեր հեռարձակելու վերաբերյալ»: Ակցիայի մասնակիցներն այնուհետև քայլերով շարունակեցին դեպի Հայաստանում ՄԱԿ-ի և ԵՄ գրասենյակներ՝ իրենց բողոքի ձայնը բարձրացնելու ՀՀ ներքին գործերին միջամտելու փորձերի դեմ⁵⁵:

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը և պետական այլ մարմիններին՝

- հրապարակայնորեն արտահայտել իրենց աջակցությունը փոքրամասնությունների պաշտպաններին, ինչպես նաև նրանց նկատմամբ բռնարարքները մերժելու վերաբերյալ հստակ դիրքորոշում արտահայտել,
- փոքրամասնությունների իրավունքների պաշտպաններին պաշտպանելու համար ձեռնարկել հասցեական և թիրախային միջոցառումներ և ապահով դարձնել նման գործունեություն վարելը:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավապաշտպաններին պաշտպանելուց անդին պետությունները պետք է «ձեռնպահ մնան իրավապաշտպանների ընտանիքների անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց ահաբեկման կամ ճնշման որևէ գործողությունից և ապահովեն պատշաճ պաշտպանություն նման դեպքերից»⁵⁶:



Նկարագրություն. Իրավապաշտպանների ընտանիքի անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց ահաբեկման կամ ճնշման դեպք է արձանագրվել երկու դեպքերում: Հատկանշական է, որ այս երկու դեպքերում էլ խոսքը կին իրավապաշտպանների մասին է. կին իրավապաշտպան Լարա Ահարոնեան և լրագրող, փաստաբան Չարուհի Մեջլումյան:

10.1.

Լարա Ահարոնեանի դեպքում կին իրավապաշտպանի հասցեին հնչեցված սպառնալիքներից բացի⁵⁷ առցանց հարթակում՝ հիմնականում կեղծ օգտատերերի կողմից, թիրախավորվում է նաև իր ընտանիքը, կեղծ ու վիրավորական բնույթի տեղեկություններ են տարածվում իր երեխաների վերաբերյալ:

10.2.

Սպառնալիքներ են եղել նաև Չարուհի Մեջլումյանի դեպքում: Լրագրող-փաստաբանն իր հարցազրույցում մասնավորապես նշում է, որ իր ընտանիքը «նորանկախ Հայաստանի պատմության մեջ նախադեպը չունեցող ատելության քարոզի, բռնության կոչերի, սպառնալիքների է ենթարկվել»: Նման մոտեցումը, ըստ Չարուհի Մեջլումյանի, առկա է եղել վերջին 5 տարիների ընթացքում, սակայն 2019 թվականին հասել է ահազնացող չափերի՝ կապված ամուսնու՝ ցմահ դատապարտյալ Միեր Ենոքյանի գործով արձանագրված այս կամ այն դրական տեղաշարժի հետ⁵⁸:



Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարության ու պետական այլ մարմիններին՝

- ընդունել իրավապաշտպանների ընտանիքի անդամների պաշտպանությունն ապահովող օրենսդրական նորմեր և հետևել դրանց կատարմանը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սույն զեկույցում «իրավապաշտպան» տերմինն օգտագործվում է լայն իմաստով՝ ներառելով նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ակտիվիստներին, մարդու իրավունքների լուսաբանմամբ և պաշտպանությամբ զբաղվող լրագրողներին, ինչպես նաև իրավապաշտպան-փաստաբաններին:
2. Գրքույկը պատրաստվել է Հյուժան ռայթս հաուս հիմնադրամի կողմից 2018 թվականին, որի նպատակն է խթանել իրավապաշտպան գործունեության պաշտպանության միջազգային կորմերի ճանաչումը, հստակ, հասանելի և հասցեական եղանակով բացատրել դրանք և դրանց կիրառության համատեքստը: Տե՛ս Գրքույկ, Էջ 2:
3. Գրքույկ, Էջ 7:
4. Տե՛ս «Իմ մարմինն անձնական է» գիրքը սկանդալի առիթ է դարձել, Azatutyun.am (2019), <https://www.azatutyun.am/a/29924856.html>:
5. Տե՛ս Չարուհի Բաթոյանի ֆեյսբուքյան Էջը, <https://www.facebook.com/zaruhibatoyan/posts/2312962335426729>:
6. Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ամբողջական ելույթի համար տե՛ս «Նիկոլ Փաշինյանն ընթերցել է աղմկահարույց «Իմ մարմինն անձնական է» գիրքը, գոհ է ՀԿ-ի աշխատանքից» (2019), <https://youtu.be/G-KToRxcX9Y>:
7. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://bit.ly/3erVLsq>:
8. Տե՛ս նաև սույն զեկույցի «Փոքրամասնությունների պաշտպանների պաշտպանություն» բաժինը:
9. Ամբողջական ելույթի համար տե՛ս հետևյալ հղմամբ. https://youtu.be/KaWfXaE3_WQ:
10. Տե՛ս տեսանյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://youtu.be/JQYSbAGkY8>:
11. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://youtu.be/iNQP6NWs0Fg>:
12. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://youtu.be/Rqolr-lcccg>:
13. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://factor.am/139643.html>:
14. Տե՛ս տեսանյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://youtu.be/FHIB44zKydg>:
15. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://www.azatutyun.am/a/29870459.html>:
16. Նույն տեղում:

17. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <http://www.un.am/hy/news/845>:
18. Տե՛ս տեքստն ամբողջությամբ, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2019/04/10/comment_spokesperson/9362:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:
21. Տե՛ս «ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն հարուցելը հանցանք է», <https://www.pinkarmenia.org/news/hatred-crime/>:
22. Տե՛ս «Մենք նաև լեսբի ու բիսեքսուալ կանայք ենք... Աժ-ում ծափահարեցին (տեսանյութ), Lurer.com (2019), <https://lurer.com/?p=314691&l=am>:
23. Տե՛ս «Ոստիկանությունը փնտրում է Լարա Ահարոնյանին սպառնացողներին», Infocom.am (2019), <https://infocom.am/?p=730&l=am>:
24. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://humanrightshouse.org/letters-of-concern/armenian-authorities-urged-to-address-growing-hate-speech-against-defenders/>:
25. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <http://coalitionagainstviolence.org/hy/6843/>:
26. Արցախյան պատերազմի մասնակից, 2-րդ կարգի հաշմանդամ, հետախույզ Սողոմոն Քոչարյանը 1995 թ. դատապարտվել էր մահապատժի: Նամեղադրվում էր պարսկահպատակ ադրբեջանցու՝ Իրաջ Փուր Միրզա-Բեկի սպանության մեջ, ավելի մանրամասն տե՛ս, <https://hetq.am/hy/article/54439>:
27. Հայտարարության ամբողջական տեքստը տե՛ս <https://www.aravot.am/2019/01/14/1009156/>:
28. Լենա Նազարյանի ֆեյսբուքյան գրառումն ամբողջությամբ տե՛ս, <https://www.facebook.com/lena.nazaryan.5/posts/2615243445173540>:
29. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://www.facebook.com/armecofront/photos/a.581249625248439/3082976508409059/>:
30. 2019 թ. հունվարի 11-ին Մանվել Գրիգորյանի գործով հերթական նիստից հետո շենքի մոտ հավաքված ցուցարարները փակել էին փաստաբան Արսեն Մկրտչյանի մեքենայի ճանապարհը՝ խոչընդոտելով փաստաբանի տեղաշարժը: Բացի այդ՝ ցուցարարներից ոմանք ներկանյութ էին լցրել մեքենայի վրա, իսկ հետո էլ՝ թքել դրա ուղղությամբ՝ փաստաբանի՝ ղեկին եղած ժամանակ: Նշված միջադեպը պայմանավորված էր դեռևս 2018 թ. դեկտեմբերի 21-ին Մանվել Գրիգորյանին գրավի դիմաց կալանքից ազատ արձակելու փաստով, ինչն առաջացրել էր հասարակության որոշ հատվածի խիստ դժգոհությունը:

31. Տե՛ս «Փաստաբանների պալատի ղեկավարը և Մանվել Գրիգորյանի պաշտպան անընդունելի են համարում դատարանի և փաստաբանների վրա ճնշումները», Armeniasputnik.am (2019), <https://armeniasputnik.am/society/20190114/16750981/manvel-grigoryani-pastabani-het-kapvac-mijadepy-anynduneli-e.html>:
32. Ելույթին մանրամասն անդրադարձել ենք ՄԻՏ Երևանի 2018 թվականի տարեկան զեկույցում, տե՛ս նույն տեղում:
33. Գրքույկ, Էջ 17:
34. Տե՛ս, օրինակ, <https://youtu.be/x3JImFMaWLw>:
35. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://bit.ly/2z85Fil>:
36. Գրքույկ, Էջ 19:
37. Տե՛ս ՄԻՊ-ի 08.07.2020 թվականի հաղորդագրությունը, <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1136172246570238/>:
38. Գրքույկ, Էջ 25:
39. Նույն տեղում:
40. Գրքույկ, Էջ 27:
41. Գրքույկ, Էջ 29:
42. Տե՛ս Մարդու իրավունքների տուն Երևանի 2018 թվականի տարեկան զեկույցը նույն տեղում:
43. Բնապահպան-ակտիվիստների ասուլիսն ամբողջությամբ տե՛ս, <https://www.facebook.com/armecofront/videos/341094046590967/>: Նշված քաղաքացիական գործերից բացի, առկա են նաև վարչական գործեր, որոնցից հատկապես հատկանշական է Լիդիան Արմենիայի ներկայացրած երկու հայցերը ՀՀ ոստիկանության դեմ, որոնցից մեկով արդեն իսկ առկա օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով դատարանը ՀՀ ոստիկանությանը պարտավորեցրել էր Ամուլսարի ճանապարհները շրջափակած անձանց դեմ քրեական գործ հարուցել՝ ՀՀ քրեական օրենսգրքի խուլիգանության և ինքնիրավչության հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշներով: Ավելի մանրամասն տե՛ս <https://www.lydianarmenia.am/index.php?m=newsOne&lang=arm&nid=220>:
44. Լրիվ անվանումը՝ «Լիդիան Արմենիա» երկրաբանահետախուզական ընկերություն:
45. Տե՛ս Datalex.am դատական տեղեկատվական համակարգ:
46. Լևոն Գալստյանը նաև հետաքրքիր դիտարկում է անում նշելով, որ իր դեմ նման տեղեկություն տարածող Էջերից մեկի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ նույն անձը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի աջակից է: Ավելի մանրամասն տե՛ս ասուլիսը՝ վերը տրված հղմամբ:

47. Գրքույկ, Էջ 31:
48. Գրքույկ, Էջ 33:
49. Գրքույկ, Էջ 35:
50. Նույն տեղում:
51. Տեսանյութի համար տե՛ս հետևյալ հղմամբ. <https://yelaket.am/?p=49829&l=am>:
52. Տե՛ս «Երկրապահը պետք է հետևի նման կեղտերին վերացնելու գործին. Խանդոյանը՝ ԼԳԲՏ թեմայի մասին», Analitik.am (2019), <https://analitik.am/news/view/470183>:
53. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://factor.am/139669.html>: Տե՛ս նաև, <https://factor.am/139718.html>:
54. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <http://www.panarmenian.net/arm/news/267490/>:
55. Տե՛ս նյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://factor.am/141114.html>:
56. Գրքույկ, Էջ 37:
57. Դրանց քննության ընթացքին ու արդյունքներին անդրադարձել ենք սույն զեկույցի «Պայքար անպատժելիության դեմ, պատասխանատվության ենթարկում» բաժնում:
58. Ավելի մանրամասն տե՛ս սույն զեկույցի առաջին՝ «Հանրային աջակցություն իրավապաշտպաններին» բաժնում:

Կայք՝
Սոցիալական ցանց՝

Հեռ.՝
Էլ. հասցե՝
Հասցե՝

<https://www.hrhyerevan.org>
<https://www.facebook.com/HRHYerevan>
<https://www.instagram.com/HRHYerevan>
+374 10 329032
info@hrhyerevan.org
Հովսեփի Էմին 119/2, Երևան 0012, Հայաստան

